Այնուհետև, բարձրագույն հրամանագրով կատարված փոխանցումներ

Անատոլիի վալի Մուստաֆա փաշայի ցուցմունքով, Սպահանի ուղղությամբ առաջացող զինվորականության կատարված անհրաժեշտ հատկացումների գծով, 1139 թ. Երևանի էյալեթում պաշարներ գնելու համար՝	50600	»
Նորին սրբություն, բարձրագույն սադրի աղաների աղա, Քուրդ Օսմանի վերակացությամբ, Արդաբիլի էյալեթում ձեռք բերված պաշարների գնի [հատուցման] համար՝	25000	»
Համադանի և Սպահանի ուղղությամբ նշանակված սարասկարի մոտ գործուղված, Անատոլիի վալի, մեծարգո վեզիր Մուստաֆա փաշայի ցուցմունքով, զինվորականության ռոճիկների հատկացումների գծով, պաշարների և անասունների գնի [հատուցման] համար, որ ի հաշիվ 1139 թ. տրված է էմին-ի նաղլ Իբրահիմ աղային՝	25000	»
Գանձակի ուղղությամբ սարասկար նշանակված, Էրզրումի վալի, մեծարգո վեզիր Մուստաֆա փաշային ենթակա զինվորականության ամենօրյա անհրաժեշտ հատկացումների գծով, պաշարների գնի [հատուցման] և այլ կարևոր ծախսերի համար, գանձատան 1139 թ. փաստաթղթերով հանձնված է Գանձակի դեֆթերդարի լիազորին՝	25000	»
Գանձակի ուղղությամբ սարասկար նշանակված մեծարգո վեզիր Մուստաֆա փաշային ենթակա, բարձրագույն սեմի ենիչերիների, ջեբեջիների, հրետանավորների և հրետանու սայլապանների (արաբաջի), ինչպես նաև Լոռիի բերդի պահպանության բարձրագույն սեմի ջեբեջիների 1139 թ. ռոճիկների [հատուցման] համար՝	53469	»
Հինգ բարձրագույն հրամանագրերով կատարված փոխանցումների գումարը՝	178469	առյուծով ղուրուշ
«Պատճառ գրույս», «արքունի օրհաշվի պատճենով» և բարձրագույն հրամանագրերով կատարված փոխանցումների գումարը՝	241810	»
Վերոհիշյալ փոխանցված գումարը ամբողջությամբ հատուցվելուց հետո, Երևանի գանձատան առկա մնացորդն է՝	2418	»

Երևանի մուհաֆիզ, մեծարգո վեզիր, հանգուցյալ Ռաջաբ փաշայի դեֆթերդար Սուլեյման էֆենդու և ռուզնամչի Մուհամադ էֆենդու կնիքներով կնքված, նախապես արձանագրված մայր մատյանի համաձայն, 1137 և 1138 թթ. Երևանի գանձատան բուն եկամուտներից 160777 ղուրուշ, Երևանի բերդի տեղական զինվորականության ռոճիկներից ու նախատեսված այլ ծախսերից բացի, Արքունի գանձատուն հանձնվելիք 245228 ղուրուշի վերաբերյալ, նախապես սրբազան հրամանագիր էր ստացվել, որպեսզի ուղարկվի և հանձնվի գանձատուն, որից հետո, նշված ուղարկվելիք գումարից, այս կողմերում անցկացվող փոխադրումների վրա ծախսելու նպատակով, «պատճառ գրույս» հրամանագրերով, «արքունի օրհաշվի պատճենով» և բարձրագույն հրամանագրով 241810 ղուրուշ, փոխանցումներով ուղարկվել է մատյանում գրանցված գյուղերը, որից հետո գանձարկղում մնացել է 2418 ղուրուշ, որի մասին և անհրաժեշտ համարվեց սույն պատճենը ներկայացնել։

1139 շավալի 17-ին (1727 թ. հունիս 7)